

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հաստատում եմ»

ՎՊՄԻ-ի ռեկտոր, ք.գ.դ.

\_\_\_\_\_ Խաչատրյան Գ.Կ.

“\_\_15\_\_” \_\_\_\_03\_\_\_\_\_ 2013թ.

**ԿԱՐԳ**

«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական  
ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսանողներին և  
ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու

Ընդունված է գիտխորհրդի նիստում

Արձանագրություն թիվ 2

“\_\_07\_\_” \_\_\_\_03\_\_\_\_\_ 2013թ.

## I. Ընդհանուր դրույթներ

1. «Ուսանողներին ակադեմիական արձակուրդ տալու» կարգով /այսուհետ Կարգ/ կարգավորվում են «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ ՄՈՒՀ/ ուսանողներին ակադեմիական արձակուրդ տալու գործընթացները:
2. Սույն Կարգի մշակման իրավական հիմքերն են ՀՀ «Կրթության մասին» օրենքը, ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը, ՀՀ Կրթության և գիտության նախարարի 12.12.2006թ. թիվ 997-Ն «ՀՀ պետական հավատարմագրված նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգը հաստատելու մասին» հրամանը:

## II. Ակադեմիական արձակուրդի տրամադրումը

3. Ակադեմիական արձակուրդ տրամադրվում է ինստիտուտի ուսանողներին և ասպիրանտներին առողջական վիճակի պատճառով՝ բժշկասոցիալական փորձաքննության /բժշկափորձագիտական հանձնաժողովի/ եզրակացության հիման վրա:
4. Ակադեմիական արձակուրդի տևողությունը մեկ օրացույցային տարի է, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
5. Ուսումնառության ժամանակահատվածում ուսանողը կարող է ձևակերպել ակադեմիական արձակուրդ ոչ ավելի, քան մեկ անգամ:
6. Ակադեմիական արձակուրդ տալու մասին որոշումը կայացնում է ՄՈՒՀ-ի ռեկտորը:
7. Ակադեմիական արձակուրդը տրվում է ռեկտորի հրամանով: Հրամանագրման համար հիմք են ծառայում ըստ բժշկասոցիալական փորձաքննության եզրակացության՝ սովորողի դիմումը, պետական առողջապահական հիմնարկի բժշկափորձագիտական հանձնաժողովի եզրակացությունը, ՄՈՒՀ-ի իրավախորհրդատուի գրավոր կարծիքը: Ձորակոչի ենթակա ուսանողները ներկայացնում են նաև զինվորական կոմիսարիատի ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացություն և զինհաշվառման կցագրման վկայական:
8. Ակադեմիական արձակուրդի դեպքում արական սեռի ուսանողները չեն կորցնում պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքը:
9. Կրթաթոշակներով ուսումնառող օտարերկրյա սովորողին, ասպիրանտին ակադեմիական արձակուրդ տալու կարգը և պայմանները որոշվում են համաձայն այդ երկրի հետ կնքած միջպետական համաձայնագրերի և պայմանագրերի:
10. Ակադեմիական արձակուրդ կարելի է տալ նաև այն ուսանողներին, ասպիրանտներին ովքեր համաձայն Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների հետ կնքած միջպետական պայմանագրերի և համաձայնագրերի կամ ՀՀ կրթության և գիտության նախարարության և այդ պետությունների կրթության կառավարման պետական մարմինների հետ կնքած համաձայնագրերի՝ մրցույթի կամ դրամաշնորհի շահման արդյունքով

հրավիրված են այդ երկրների համապատասխան ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու, որակավորումը բարձրացնելու կամ համատեղ հետազոտություններ կատարելու նպատակով:

11. Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ ուսումնառող և կրթաթոշակ ստացող ուսանողները, ասպիրանտները ակադեմիական արձակուրդից վերադառնալուց հետո վերականգնվում են ուսուցման նույն համակարգում:
12. Վճարովի ուսուցմամբ ուսումնառող և ակադեմիական արձակուրդում գտնվող ուսանողի, ասպիրանտի կրթաթոշակ ստանալու կամ լրացուցիչ վճարումներ կատարելու պայմանները որոշվում է ուսումնական հաստատության և ուսանողի, ասպիրանտի միջև կնքված պայմանագրի համաձայն:
13. Ակադեմիական արձակուրդից վերադարձող ուսանողի կարգավիճակը /պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցմամբ կամ բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի)/ մնում է նույնը:
14. Ակադեմիական արձակուրդի ժամկետի լրանալու դեպքում ուսանողը դիմում է ներկայացնում ուսումնական գործընթացին թույլատրելու խնդրանքով: Ըստ բժշկասոցիալական փորձաքննության եզրակացության ակադեմիական արձակուրդում գտնվող ուսանողին, ասպիրանտին ուսումնական գործընթացին թույլատրելու համար հիմք են ծառայում ուսանողի, ասպիրանտի դիմումը, պետական առողջապահական բժշկասոցիալական փորձաքննության եզրակացությունը, համաձայն որոնց ՄՈՒՀ-ի ռեկտորը կցագրման հրամանով թույլ է տալիս ուսանողին, ասպիրանտին շարունակելու ուսումը: Կցագրման հրամանում նշվում են մասնագիտությունը, կուրսը, կիսամյակը, վարձավճարը /եթե ուսանողը վճարովի համակարգում է սովորում/, առարկայական տարբերությունները և նրանց հանձնման անհատական ժամանակացույցը/մեկ ամիս/, նաև այլ պայմաններ:
15. Մեկամսյա ժամկետի ավարտից հետո մեկ շաբաթվա ընթացքում կատարվում է հիմնական հրամանագրում: Ուսանողը հրամանագրվում է տվյալ կուրսում սահմանված ժամանակացույցով առարկայական տարբերությունները հանձնելուց, պայմանագիրը կնքելուց /հարակից մասնագիտությամբ ուսումը շարունակելու դեպքում/, տվյալ կիսամյակի վարձավճարը մուծելուց հետո:
16. Կցագրված ուսանողին թույլատրվում է մասնակցել համապատասխան խմբի ակադեմիական ուսումնական պարապմունքներին:
17. Ակադեմիական արձակուրդի ժամկետը լրանալու դեպքում, 10 օրյա ժամկետում, անհարգելի պատճառով չներկայանալու և դիմում չգրելու պարագայում ուսանողը ենթակա է ինստիտուտից հեռացման:
18. Ակադեմիական արձակուրդից վերադարձած /սահմանված կարգով հրամանով վավերացրած/, սակայն ուսումնական պարապմունքներին չներկայացած ուսանողը հեռացվում է ինստիտուտից:

19. Ակադեմիական արձակուրդ տրամադրելուց առաջ ուսանողին դեկանատի կողմից գրավոր տեղեկացվում է հաջորդ ուսումնական տարում տվյալ մասնագիտությամբ համապատասխան կուրս չունենալու մասին: Տվյալ մասնագիտությամբ համապատասխան կուրսի բացակայության դեպքում ուսանողին առաջարկվում է ուսումը շարունակել հարակից մասնագիտությամբ: